ԱՐՑԱԽԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Արսէն Յարութիւնեան

Հայագիտութեան առաջնային խնդիրներից է Հայոց պատմութեան տարբեր շրջափուլերը լուսաբանող սկզբնաղբիւրների ուսումնասիրութիւնն ու հրատարակութիւնը, որոնց շարքում իրենց պատկառելի տեղն ունեն հայերէն վիմագրերը: Հայ ժողովուրդն իր բազմադարեայ գոյութեան ընթացքում շարունակ կրել է նուաճողական նկրտումներ ունեցող ցեղերի ծանր լուծը, կորցրել պատմական հայրենիքի, այդ թւում՝ հոգեւոր-մշակութային ժառանգութեան զգալի մասը: Ներկայ մարտահրաւէրներին դիմակայելու հերթական փորձութիւնը եւս ասուածի վառ վկայութիւնն է, որի առհաւատչեան Արցախեան վերջին՝ 44-օրեայ պատերազմն էր:

Սոյն յօդուածի խնդրոյ առարկան Արցախի պատմութեան վիմագիր նշխարների ուսումնասիրութեան ամփոփ նկարագիրը ներկայացնելն է, որտեղ յատկանշելու ենք դրանց հաւաքչական աշխատանքներն ու նախորդ հրատարակութիւնների ընդհանուր պատկերը եւ այդ հենքի վրայ՝ ներկայ անելիքները[1]*:*

Հայերէն վիմագրերի ընդօրինակման եւ իբրեւ սկզբնաղբիւր վկայման առաջին յիշատակութիւնները դեռեւս հայ մատենագիրների՝ Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս արք. Օրբէլեանի, Զաքարիայ սրկ. Քանաքեռցու երկասիրութիւններում են, իսկ աւելի ուշ՝ 1701-1728 թթ. Աղուանից (Գանձասարի) Հայոց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանի կազմած՝ վիմագիր ընդօրինակութիւնների ժողովածոյում: Եթէ Կիրակոս Գանձակեցին «Հայոց պատմութիւնը» շարադրելիս անուղղակիօրէն օգտուել է Գանձասարի ու Դադիվանքի չինարարական վիմագրերից[2]*, ապա նոյնը չենք կարող ասել Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանի*[3]*, իսկ աւելի ուշ՝ Յովհաննավանքի միաբան Զաքարիայ Քանաքեռցու*[4] *պատմագրական երկերի մասին, որոնց էջերում ամփոփուած են մի քանի տասնեակ հայերէն վիմագրեր: Հետագայում այդ գործին բոլորովին նոր որակ հաղորդեց նաեւ Աղուանից Հայոց կաթողիկոս* Եսայի Հասան-Ջալալեանը, *որն ընդօրինակել եւ 1718 թ. ամբողջացրել է հիմնականում Արցախ աշխարհի՝ շուրջ 100 արձանագրութիւն ընդգրկող ժողովածոն: Ցաւօք, այդ աշխատութեան բնօրինակը մեզ չի հասել. փոխարէնը Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածոյում է պահւում այդ նոյն ժողովածոյի հետագայի երեք ընդ-*

1 Այս թեմայով զեկուցում ենք կարդացել 2018 թ. օգոստոսի 9-10-ը Շուշիում կայացած «Արցախի պատմութեան, լեզուի եւ մշակոյթի հիմնախնդիրները» խորագրով աշխատաժողովին:

2 **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմութիւն Հայոց*, աշխատ.՝ **Կ. Մէլիք-Օհանջանեանի**, Երեւան, 1961, էջ 215-216, 269-270:

3 **Ստեփանոս Օրբէլեան,** *Պատմութիւն նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910: ԺԳ. դարի պատմագիր, Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանն առաջինն է, որն իր Պատմութեան մէջ, իբրեւ սկզբնաղբիւր, յիշատակել-վկայակոչել է պատմական Սիւնիքի հոգեւոր կենտրոնների մի շարք վիմագրեր:

4 **Զաքարիա Քանաքեռցի,** *Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յովհաննու վանից*, աշխատ.՝ **Ա. Վիրաբեանի**, Երեւան, 2015: ԺԷ. դարի պատմիչ, 1630-ականներից Յովհաննավանքում հաստատուած եւ տեղի միաբան Զաքարիա Քանաքեռցին իր Պատմագրութեան երրորդ գլխում կազմել է վանքի «Կոնդակը», որտեղ ընդգրկել է նաեւ վանքի վիմագրերից աւելի քան 20-ը:

դօրինակութիւն (ՄՄ 4537, 7821, 9932): Դրանցից համեմատաբար ամբողջականն ու ժամանակագրօրէն վաղագոյնը ՄՄ 7821 ձեռագիրն է, որը գաղափար օրինակից արտագրուել է 1809 թ.՝ Գանձասարի վանքում, Եսայի կաթողիկոսի տոհմակից, 1830-1854 թթ. Արցախի մետրոպոլիտ Բաղդասար արքեպ. Հասան-Ջալալեանի ձեռքով: Այդ է վկայում ձեռագրում պահպանուած գրչի յիշատակարանը. «Ի ՌՄԾԸ. (1809) թուին Հայոց, ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ, ձեռամբ Բաղդասար վարդապետի Ջալալեան եւ որդւոյ Դանիէլ հազարապետին Տեառն Խաչենոյ»[5]: Միեւնոյն ձեռագրում վերստին արտագրուել են նաեւ Եսայի կաթողիկոսի անուան յիշատակմամբ 1718 թուականի զոյգ յիշատակարանները[6]: Դրանցից մէկի համաձայն՝ Աղուանից Հայոց կաթողիկոսը արձանագրութիւնների ժողովածոն, որն «արձաններ» է կոչում, հին օրինակից «ի նորս փոխարկեալ», այսինքն՝ աւելի վաղ ընդօրինակուած ժողովածոյից վիմագրերը վերստին արտագրել-մաքրագրել է մէկ այլ տետրում:

Ասենք, որ գրչագրի գիտական ուսումնասիրութիւնը եւ բնագիրը՝ համեմատութեամբ առկայ հրատարակութիւնների, տարիներ առաջ մեր աշխատասիրութեամբ դրուեց գիտական շրջանառութեան մէջ[7]: Ձեռագրում զետեղուած 92 վիմագրերի մեծ մասն Արցախից է՝ Գանձասարից (38 արձ.), Դադիվանքից (7 արձ.), Խաթրայ կամ Խաղավանքից (6 արձ.), Գտչավանքից (1 արձ.), Ս. Եղիշայ կոյսի վանքից (5 արձ.), Վաճառից (2 արձ.) եւ այլ համալիրներից: Մի քանի վիմագրեր էլ ընդօրինակուել եւ ժողովածոյ են մուծուել Նոր Վարագավանքից (2 արձ.), Գոշավանքից (3 արձ.) ու Հաղարծինից (2 արձ.):

Կարեւոր է արձանագրել, որ Եսայի Հասան-Ջալալեանի ընդօրինակութիւնները թէպէտ երբեմն կատարուած են ընտրովի, կրճատումներով, բնագրի տողերի խառն դասաւորութեամբ եւ հեռու՝ վիմագրագիտութեան արդի պահանջներից, այդուհանդերձ, իբրեւ Արցախի վիմագրական ժառանգութեան մի մասն ամփոփող առաջին հաւաքածոյ՝ իր ժամանակի համար անգերազանցելի են[8]: Այս առումով տեղին է վկայակոչել պատմաբան Բագրատ Ուլուբաբեանի բնորոշումը, ըստ որի՝ Եսայի կաթողիկոսի ընդօրինակութիւնների եւ բնագրերի համեմատութիւնը լիովին պարզում է մեծանուն գործչի վիմագրագիտական հմտութիւնը, այն է՝ վիմագրերի ճիշտ ու անթերի ընդօրինակութիւնները, որոնք հետագայում գրեթէ անփոփոխ տեղ են գտել տեղագիրների՝ Յովհաննէս եպս. Շահխաթունեանցի, Սարգիս արք. Ջալալեանցի եւ միւսների աշխատութիւններում[9]:

Յայտնի իրողութիւն է, որ ԺԹ. դարը մեզանում նշանաւորուեց որպէս հայագիտութեան զարգացման սկզբնափուլ: Հիմնականում հոգեւոր գործիչների աշխատասիրութեամբ մէկը միւսին յաջորդելով հրատարակուեցին նկարագրական-տեղագրական բնոյթի ստուարածաւալ հատորներ, որոնցում բնակավայրերի նկարագրութեանը զուգահեռ առանցքային տեղ էին յատկացւում նաեւ պատմաճարտարապետական յուշարձանների՝ վանքերի ու եկեղեցիների որմերին, խաչքարերին ու տապանաքարերին պահպանուած արձանագրութիւնների վերծանութեանը: Յիշեալ դարի 20-ական թթ. հայերէն վիմագրերի հետագայ «ճակատագրով» մտահոգուած ապագայ Ամենայն Հայոց կաթողի-

5 ՄՄ ձեռ. Հ՚մ 7821, 18ա:

6 Նոյն տեղում, 10ա, 11ա:

7 **Ա. Յարութիւնեան,** *Եսայի Հասան-Ջալալեանի վիմագրագիտական վաստակը (ըստ ՄՄ Հ՚մ 7821 ձեռագրի)*, «Էջմիածին», 2015, Ժ., էջ 117-159:

8 Նոյն տեղում, էջ 124:

9 **Ուլուբաբեան Բ.,** *Գանձասար*, Եր., 1981, էջ 78:

կոս Ներսէս Աշտարակեցին *(1843-1857 թթ.) յանձնարարականներ է տուել մի շարք վանքերի ու եկեղեցիների առաջնորդներին առ այն, որ հարկ է խնամքով եւ հնարաւորինս ճշգրիտ ընդօրինակել ու կորստից փրկել մեր քարեղէն գրաւոր մշակոյթը: Այս առումով յիշարժան է նրա 1825 թ. օգոստոսի 31 թուակիր յայտնի նամակը՝ ուղղուած Սանահինի վանքի առաջնորդ Յարութիւն Տէր-Բարսեղեանցին, ուր ապագայ հայրապետը կարգադրում է. «ի գործ եդեալ ջան ունիցիք հաւաքել զամենայն գյիշատակագրութիւնս գտանեցեալ ի վերա բարաւորաց դրանց եկեղեցեաց կամ ի վերա որմոց նոցին ի ներքուստ եւ արտաքուստ եւ կամ ի վերա գերեզմանաքարա(ն)ց հնագունից հոգեւորականաց եւ մարմնականաց...»*[10]*:*

Հետաքրքիր է, որ 1821-1822 թթ. Եփրեմ Ա. Ջորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսը (1809-1830 թթ.) դեռեւս Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսէս Աշտարակեցու եւ մի շարք այլ հոգեւորականների ուղեկցութեամբ եղել է Արցախում, նրանց հետ նաեւ՝ գրագիր Յովհաննէս Ղրիմեցին *եւ* Մեսրոպ սարկաւագ Թաղիադեանը, *որոնց եւս Ներսէս Աշտարակեցին գրեթէ նոյնաբովանդակ յանձնարարականներ է տուել: Մ. Թաղիադեանի գրառումներից մէկը հաստատում է այդ իրողութիւնը. «Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս եւ օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչաքարս եւ ի վէմս ապառաժից, սկսեալ ի Գանձասարայ մինչեւ ի Հաղբատ եւ ի Սանահին, զորս եւ մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա, որք յետոյ կորեան»*[11]*: Յաւօք, այդ աշխատութիւնը մեզ չի հասել եւ, ինչպէս Թաղիադեանն է նշում, կորել է դեռեւս իր կենդանութեան օրօք:*

ԺԹ. դարի կէսերին Արցախի վիմագրութեան ուսումնասիրութեան բնագաւառում աչքի են ընկել Ս. Էջմիածնի միաբան Յովհաննէս եպս. Շահխաթունեանցն *ու Սանահինի վանքի միաբան, Հասան-Ջալալեան տոհմի շառաւիղներից* Սարգիս արք. Ջալալեանցը: *Յովհաննէս եպս. Շահխաթունեանցն իր նշանաւոր երկհատոր «Ստորագրութեան» վերջում, իբրեւ յաւելուած, ներկայացրել է Արցախի վիմագրերից շուրջ հինգ տասնեակը: Ինչպէս վերը նշեցինք, հեղինակը, իբրեւ սկզբնաղբիւր, օգտագործել է Եսայի Հասան-Ջալալեանի «արցախեան» վիմագրերի ժողովածոն, ինչի մասին է վկայում աշխատութեան՝ այդ հատուածի խորագիր-յիշատակութիւնը. «Արձանագրութիւնք աշխարհին Աղուանից, զորս ժողովեաց յեկեղեցեաց եւ ի խաչարձանաց Եսայի կաթուղիկոս նոցին Աղուանից, ի թուականութեանն Հայոց ՌՃԿԷ. (1718), ի մի տետր, յորոյ գրուածոց առեալ մեր դիցուք աստէն ի տեղեկութիւն հայրենի հնութեանց»*[12]*: Այս յիշատակութիւնը պարզում է, որ Շահխաթունեանցն օգտուել է ոչ թէ Եսայի կաթողիկոսի ժողովածոյի հետագայ ընդօրինակութիւններից, այլ հենց 1718 թուակիր բնագրից:*

Երկհատորեակը մէկ գրքով վերահրատարակելիս՝ աշխատութեան վերջում զետեղուած վիմագրերի եւ դրանց՝ «Դիւան»-ում առկայ հրատարակութիւնների հետ

10 ՄՄ, Ներսես Աշտարակեցու արխիւ, թղթ. 166, վավ. 378: Նամակի ամբողջական հրատարակութիւնը տե՛ս վիմագրագէտ Սեդրակ Բարխուդարեանի «Հայկական վիմագրութիւն» խորագրով առաջաբանը - *«Դիւան հայ վիմագրութեան»* (այսուհետեւ՝ ԴՀՎ), պրակ I, *Անի քաղաք*, կազմեց՝ **Ց. Օրբէլի**, Երեւան, 1966, էջ XVIII:

11 **Մ. Թաղիադեան**, *Ուղեգրութիւններ, յօդուածներ, նամակներ, վաւերագրեր*, Երեւան, 1975, էջ 177:

12 **Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, աշխատ.՝ **Ա. Տէր-Ստեփանեանի**, Ս. Էջմիածին, 2014, էջ 450 (վերահրատարակութիւն):

համեմատութիւնն իրականացրել է Մատենադարանի աւագ գիտաշխատող Արմէն Տէր-Ստեփանեանը՝ առաջաբանում արձանագրելով, որ Շահխաթունեանցն օգտագործել է նաեւ Աղուանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանի ընդօրինակութիւնները[13]: Աշխատութեան էջերում ընդգրկուած վիմագրերի գերակշիռ մասը Գանձասարից է՝ 21 արձանագրութիւն, ապա Խութայ կամ Դադիվանքից (6 արձ.), Ս. Եղիշայ կոյսի վանքից (3 արձ.), Ճալեթի Ս. Աստուածածին եկեղեցուց (3 արձ.), Հոռեկավանքից (2 արձ.), Ծարայ վանքից (2 արձ.), Գտչավանքից (1 արձ.) եւ այլն[14]:

Այսու, եթէ Շահխաթունեանցի «արցախեան» վիմագրութեան բուն աղբիւրը բնօրինակով մեզ չհասած Եսայի Հասան-Ջալալեանի վերոնշեալ տետրն էր, ապա Սարգիս Ջալալեանցն անձամբ է այցելել Արցախի մի շարք բնակավայրեր, նկարագրել իր տեսած պատմական յուշարձաններն ու ընդօրինակել արձանագրութիւնները՝ դրանք ամփոփելով «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկհատոր տեղագրութեան էջերում: Սարգիս Ջալալեանցը վիմագրեր է հրապարակել Գանձասարից (30 արձ.), Դադիվանքից (14 արձ.), Ծարայ վանքից (1 արձ.), Խաթրավանքից (12 արձ.), Մեծիրանից Ս. Յակոբայ վանքից (8 արձ.), Զարեքայ անապատից (5 արձ.) եւ այլ մեծ ու փոքր յուշարձաններից[15]:

Արցախի վիմագրութիւնն առաւել ընդգրկուն ներկայացրել է ծագումով Արցախի Խնածախ գիւղից, Ս. Էջմիածնի միաբան Մակար եպս. Բարխուդարեանցը: Իր «Աղուանից երկիր եւ դրացիք», ինչպէս նաեւ «Արցախ» աշխատութիւններում Բարխուդարեանցը բազմաթիւ վիմագրերի վկայակոչմամբ կարեւորել է դրանց աղբիւրագիտական արժէքը: Նրա խօսքով, Հայրենի հնութիւններն ու արձանագրութիւններն օր առաջ պէտք է կորստից փրկել, քանզի «մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարները»[16]: Դարձեալ Արցախի վիմագրերի ընդօրինակման առիթով Մակար եպս. Բարխուդարեանցն ասել է. «...տեսնելով, որ ժամանակի անողոք ճիրանները լափում ու եղծում են մեր թանկագին հայրենիքի՝ Արցախի ամենապատուական հնութիւնները եւ արձանագրութիւնները, տեսնելով, որ տգէտ եւ թշնամի ձեռներ քանդում, աւերում եւ ոչնչացնում են հայրենի սրբազան աւանդները, տեսնելով, որ ցեցերը կրծում եւ անյայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները... պարտք համարեցի... աղքատօրէն հետազոտել... եւ գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ մասնագէտների համար»[17]:

Մակար եպս. Բարխուդարեանցի նշուած երկու աշխատութիւնները մէկ գրքով վերահրատարակութեան պատրաստած պատմաբան Պաւել Զօբանեանն իրաւամբ նշում է, որ հետագայում վիմագրութեան «Դիւանը» կազմելիս՝ Սեդրակ Բարխուդարեանը, մի շարք վիմագրեր տեղում չտեսնելով, դրանք վերցրել է Մ. Բարխուդարեանցի հաւաքածոյից, հետեւաբար, վերջինիս աշխատութիւնը ձեռք է բերել սկզբնաղբիւրի նշանակութիւն, որտեղ ընդգրկուած է իր այցելութեան ժամանակ եղած վիմագրերի մեծ մասը[18]: Վստահաբար կարելի է ասել, որ Մակար եպս. Բարխուդարեանցի ընդօրինակութիւններն էլ հիմք հանդիսացան Արցախի վիմագրական ժա-

13 Նոյն տեղում, էջ 6:

14 Նոյն տեղում, էջ 450-470:

15 **Սարգիս վրդ. Ջալալեանց,** *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան,* մասն Ա., Բ., Տփխիս, 1842, 1858:

16 **Մակար եպս. Բարխուտարեանց,** *Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ,* աշխատ.՝ **Պ. Զոբանեանի,** Երեւան, 1999, էջ 8 (վերահրատարակութիւն):

17 Նոյն տեղում, էջ 9:

18 Նոյն տեղում, էջ 11-12:

ռանգութեան հետագայ համալիր հետազոտութիւնների համար:

Նախորդ դարասկզբին, Ս. Էջմիածնի միաբան Խաչիկ ծ. վրդ. Դաղեանը *հրատարակեց Արցախի ոչ նուազ ուշագրաւ վանական համալիրներից մեկի՝ Մեծիրանից Ս. Յակոբայ վանքի վիմագրերը: Խաչենագետի հովտում՝ Քոլատակ գիւղից մօտ 2 կմ հիւսիս գտնուող համալիրը, ըստ Խաչիկ վարդապետի, Մեծիրանից է կոչուել Աղուանից կաթողիկոսներից շատերի՝ այնտեղ թաղուած լինելու պատճառով*[19]*, իսկ ըստ վիմագրագէտ Ս. Բարխուդարեանի հիմնաւորման՝ Մեծիրանքն Արցախի գաւառներից մեկն էր իր եպիսկոպոսով, որը նստում էր հենց այս վանքում: Նոյն գաւառի անունով էլ կոչուել է նաեւ վանքը, որը Ս. Յակոբի անունն է կրել, քանի որ այստեղ է պահուել Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի աջը*[20]*:*

Ս. Յակոբայ վանքում երեք տարի պաշտօնավարելու ընթացքում Խաչիկ վարդապետին յաջողուել է ընդօրինակել եւ հրատարակել սրբավայրի վիմագրերից 35-ը՝ ներկայացնելով դրանց տեղը, երբեմն էլ՝ կոթողների ու տաճարի չափերը: Յօդուածի վերջում հեղինակն արձանագրում է, որ «բացի այս, գտնուեցան եւ մի քանի կտոր ուրիշ արձանագրութիւններ միայն կիսատ-պռատ, ոչ մի օգուտ չեն կարող բերել պատմութեան»[21]*: Վերոբերեալ մօտեցումը, ցաւօք, ուսումնասիրողների մօտ մասսայական բնոյթ է կրել, ուստի օր առաջ պէտք էր մշակել վիմագրերի ընդօրինակման նոր չափանիշներ, որոնցով պիտի առաջնորդուէին ժամանակակից հետազօտողները:*

Տեղագրական-նկարագրական հենքով են ներկայացուած նաեւ ազգագրագէտ Երուանդ Լալայեանի *վիմագրական վերծանութիւնները: «Ազգագրական հանդէս»-ի էջերում հրատարակուած Վարանդայի եւ Գանձակի տեղագրութեան, բնաշխարհի, գիւղերի, բերդերի ու նշանաւոր վանքերի նկարագրութեան համապատկերում հետազօտողը զուգադրել է նաեւ յուշարձանների գրաւոր-մշակութային ժառանգութիւնը՝ սկսած ձեռագրերի մասին յիշատակութիւններից մինչեւ վիմական արձանագրութիւններ: Այսպէս, Վարանդայի գաւառի հոգեւոր կենտրոնների շուրջ երեք տասնեակ վիմագրերը հեղինակն ընդօրինակել է Ամարասից (1 արձ.), Հերհերից (5 արձ.), Զանախչիի (Աւետարանոց) Կուսանաց անապատից (4 արձ.), Ս. Եղիշայ կոյսի վանքից (3 արձ.), Բռի եղցիից (5 արձ.), Մովատեղի Կարմիր եկեղեցուց (9 արձ.) եւ այլ կենտրոններից*[22]*: Նոյն կերպ նաեւ Գանձակի վիմագրերն են՝ համադրուած յուշարձանների նկարագրութեանը, երբեմն էլ՝ բուն շարադրանքից անջատ: Սրանք շուրջ հինգ տասնեակի են հասնում՝ ներկայացուած Զարեքայ անապատից (6 արձ.), Խաչակապի եւ Մեծ Բանանցի Թարգմանչաց վանքերից (6 արձ.), Հին Փիփ գիւղատեղից (3 արձ.), Գարդմանիկից (3 արձ.), Ղարաբուլախից (2 արձ.), Թորդան գիւղատեղից (2 արձ.) եւ այլ բնակավայրերի սրբավայրերից ու գերեզմանոցներից*[23]*:*

Փաստելի է, որ Արցախի յուշարձաններից վիմագրերով առաւել հարուստը Աղուանից երբեմնի կաթողիկոսանիստ

19 **Խաչիկ ծ. վրդ. Դատեան,** *Մեծարանց, որ եւ Ս. Յակովբայ վանից արձանագրութիւնները,* «Բանասէր». հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական եւ քննական, հ. երրորդ, պրակ Բ-Գ., Պարիզ, 1901, էջ 135:

20 ԴՀՎ, պրակ V, *Արցախ,* կազմեց՝ **Ս. Բարխուդարեան,** Երեւան, 1982, էջ 11:

21 **Խաչիկ ծ. վրդ. Դատեան,** նշ. աշխ., էջ 147:

22 **Եր. Լալայեան,** *Վարանդայ,* «Ազգագրական հանդէս», երկրորդ տարի, Բ. գիրք, Թիֆլիս, 1897, էջ 9-53:

23 **Եր. Լալայեան,** *Գանձակի գաւառ. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար,* «Ազգագրական հանդէս», չորրորդ տարի, Ե. գիրք, Թիֆլիս, 1899, էջ 307-348:

Գանձասարի վանքն է, ուստի սրանով է պայմանաւորուած ուսումնասիրողների կողմից այս վանական համալիրի քարեղէն վկայագրերի հետազօտութեան խնդրին առանձնայատուկ ուշադրութիւն դարձնելը[24]*: Ակադեմիկոս* Յովսէփ Օրբէլին, *դեռեւս 1909 թ. Նիկողայոս Մառի խորհրդով Անիից գործուղուելով Արցախ՝ ընդօրինակել է Խաչենի տարածաշրջանի բազմաթիւ վիմագրեր, հրատարակութեան պատրաստել «Надписи Гандзасара и hАвоцптука» (Գանձասարայ եւ Հաւոցպտկոյ արձանագրութիւնք) ժողովածոն (1919 թ., ընդգրկում է շուրջ 100 արձ.), որը, սակայն, Սանկտ-Պետերբուրգի 1918, 1922 եւ 1924 թթ. յայտնի ջրհեղեղների պատճառով կեանքի չի կոչուել եւ մեզ է հասել միայն 3 նմուշ-օրինակով: Վերջերս, վիմագրագէտ Հայկ Յակոբեանի աշխատասիրութեամբ այն հրատարակուեց հետագայ ուսումնասիրողների՝ Սեդրակ Բարխուդարեանի, Բագրատ Ուլուբաբեանի, Միքայէլ եպս. Աջապահեանի եւ իր իսկ ընդօրինակած նոր արձանագրութիւնների լրացմամբ (ընդհանուր՝ 220 արձ.)*[25]*:*

Արցախի՝ վիմագրերով հարուստ երկրորդ խոշոր համալիրը Դադիվանքն է, որին ի թիւս Տաթեւի եւ Հաղարծինի վանքերի վիմագրերի՝ անդրադարձել է Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ Մագիստրոս արք. Տէր-Մովսիսեանը: *Անխոնջ հոգեւորականն իր ուսումնասիրութիւններն իրականացրել է դեռեւս նախորդ դարասկզբին, սակայն աշխատութիւնը հրատարակուել է միայն 1938-ին՝ Երուսաղեմում: Նախքան իր ընդօրինակած 45 վիմագրերը ներկայացնելը, Մեսրոպ Մագիստրոսը գրում է, որ «բազմաթիւ արձանագրութիւններից շատերը կոտրատուել, անհետ կորել են, կամ ծածկուած են փլատակների տակ. անկորուստ պահուածներն իսկ բաւական են վերականգնելու վանքի յաջորդական անցեալի նկարագրութիւնը»*[26]*: Նա ափսոսանքով է նշում, որ իր ունեցած լուսանկարները կորել են, սակայն մխիթարութիւնն այն է, որ ժողովածոն լինելու է նախորդներից աւելի ամբողջական*[27]*:*

Աւելի ուշ, Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Համազասպ Ոսկեանի *աշխատասիրութեամբ սկսում է հրատարակուել Հայաստանի պատմական յուշարձաններին նուիրուած աշխատութիւնների շարքը, այդ թւում՝ «Արցախի վանքերը» մենագրութիւնը, որտեղ թէպէտ համառօտ, բայց ըստ հարկի հեղինակն իր նկարագրութիւններն ուղեկցում է պատմավիմագրագիտական վերլուծութիւններով*[28]*:*

Ինչպէս վերը նկատեցինք, Արցախի հոգեւոր կենտրոններից առաւել ուսումնասիրուածը Գանձասարի վանքն է, որին առանձին մենագրութիւն է նուիրել նաեւ պատմաբան Բագրատ Ուլուբաբեանը: *Գիտնականը յատուկ ուշադրութիւն է դարձրել համալիրի ստեղծման պատմութեանն ու ճարտարապետական նկարագրին եւ, որ կարեւորն է, հրատարակել է վանքից եւ շրջակայքից 182 վիմագիր՝ գերազանցելով իր նախորդներին: Վերջում Բ. Ուլուբա-*

---

24 Գանձասարի վանքի պատմաճարտարապետական նկարագրին անդրադարձել է նաեւ հայագէտ Անատոլի Յակոբսոնը (**А. Якобсон,** *Гандзасарский монастырь XIII в.*, Исследования по истории культуры народов Востока, Ленинград, 1960, էջ 144-158):

25 **И. Орбели,** *Надписи Гандзасара и hАвоцптука*, собрал и приготовил к печати **А. Акопян,** Ер., 2016: Հայկ Յակոբեանի աշխատասիրութեամբ հրատարակութեան է պատրաստում նաեւ Յովսէփ Օրբելու «Խաչենի արձանագրութիւնները» ուսումնասիրութիւնը, որը կ'ընդգրկուի ակադեմիկոսի հատընտիր աշխատութիւնների երրորդ հատորում (**Հ. Յակոբեան,** բանաւոր հաղորդում – 22. 02. 2021 թ.):

26 **Մեսրոպ Մագիստրոս արք. Տէր-Մովսիսեան,** *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները*, Երուսաղեմ, 1938, էջ 94:

27 Նոյն տեղում:

28 **Հ. Հ. Ոսկեան,** *Արցախի վանքերը*, Վիեննա, 1953:

բեանն իր համոզմունքն է յայտնում առ այն, որ «անկասկած եղել են նաեւ ուրիշները, որոնք զոհ են գնացել ժամանակի, բնութեան տարերքի եւ մասամբ էլ անհասկացող մարդու աւերիչ ուժին: Հաւանաբար, պեղումների միջոցով հնարաւոր կը դառնայ արեւերես հանել այնպիսիններին, որոնք գտնւում են այժմ արդէն հողի տակ անցած տապանաքարերի վրայ»[29]:

Բ. Ուլուբաբեանի գրքի հրատարակութիւնից ընդամենը մէկ տարի անց, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի վիմագրութեան բաժինը հայագէտների դատին յանձնեց անուանի վիմագրագէտ Սեդրակ Բարխուդարեանի *(1898-1970 թթ.) «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի Արցախի պրակը, որը հեղինակը հաւաքագրել եւ կազմել էր դեռեւս 1960-1964 թթ. հայ-ադրբեջանական համատեղ գիտարշաւների ընթացքում*[30]: *Պրակում ամփոփուած է Թ.-ԺԸ. դդ. 1071 արձանագրութիւն, որից 133-ը՝ Գանձասարից եւ շրջակայքից, 58-ը՝ Դադիվանքից, 41-ը՝ Մեծիրանից Ս. Յակոբայ վանքից, 25-ը՝ Կոշիկ անապատից, 12-ը՝ Հաւապտուկի վանքից, 30-ը՝ Վաճառից եւ շրջակայքից, 13-ը՝ Երից Մանկանց վանքից, 36-ը՝ Ս. Եղիշայ կոյսի վանքից, 11-ը՝ Վաղուհասից, 18-ը՝ Բերդաձորի Կարմիր վանքից, 34-ը՝ Խաթրավանքից, 11-ը՝ Զարեքդարայ վանքից, 36-ը՝ Տող գիւղից եւ շրջակայքից, 18-ը՝ Գտչավանքից, 8-ը՝ Ծիծեռնավանքից, 41-ը՝ Ծար-Զառ գիւղից եւ Ծարայ վանքից եւ այլն*[31]:

Արցախի վիմագրերի գիտական հրատարակութիւնը տակաւին վաղուց էր սպասուած: 1960-ականներից հրատարակուող «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարում արձանագրութիւնների վերծանութիւններն արւում էին Ն. Մառի եւ նրա աշակերտ Յ. Օրբէլու մշակած նոր մեթոդներով՝ կից գրչագրերով եւ լուսանկարներով, վերծանութիւնները՝ համապատասխան պայմանական նշաններով, նախորդ հրատարակութիւնների մատենագիտութեամբ, անհրաժեշտ ծանօթագրութիւններով: Արցախի հարիւրաւոր վիմագրեր առաջին անգամ հրատարակուեցին հենց այդ սկզբունքներով, սակայն Ս. Բարխուդարեանը մեծապէս օգտուել է նաեւ իր նախորդների աշխատութիւններից, որոնց հրատարակած վիմագրերից որոշներն արդէն չէին պահպանուել եւ վիմագրագէտը դրանք ներկայացրել է «այժմ գոյութիւն չունեցող արձանագրութիւններ» կամ «արձանագրութիւններ, որոնք այժմ տեղում չկան» խորագրերի ներքոյ[32]:

Ս. Բարխուդարեանի կազմած «Դիւան»-ում Արցախի յուշարձանները խմբաւորուած են շրջանային հետեւեալ բաժանմամբ.

Մարտակերտի շրջան – 32 բնակավայր եւ յուշարձան (Գանձասար, Մեծիրանից Ս. Յակոբ, Վաճառ, Երից Մանկանց վանք, Զարեքդարայ վանք եւ այլն),

Ստեփանակերտի շրջան – 12 բնակավայր եւ յուշարձան (Շուշի, Շօշ, Քարա-

---

29 **Բ. Ուլուբաբեան,** *Գանձասար*, Երեւան, 1981, էջ 166:

30 Ընդօրինակելով ընդամենը հինգ տասնեակի հասնող արաբատառ վիմագրեր՝ ադրբեջանական կողմը, ղեկավարութեամբ Մեշեդի Նէյմատովայի, տարբեր պատրուակներ յօրինելով հրաժարուել է յետագայ համագործակցութիւնից (**Գր. Գրիգորեան,** *Ականաւոր վիմագրագէտը*, «Լրաբեր» հաս. գիտ., 2005, Հ՚ 3, էջ 188-193):

31 ԴՀՎ, պրակ V, Արցախ:

32 Ս. Բարխուդարեանի այրի, լուսահոգի Կլարայ Ասատրեանը յետագայում անդրադարձել է Արցախի վիմագրերի հաւաքման գործում Ս. Բարխուդարեանի ունեցած աւանդին (**Կ. Ասատրեան,** *Ս. Բարխուդարեանի դերը Արցախի վիմական արձանագրութիւնների հաւաքման եւ հրատարակման գործում*, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն. անցեալը, ներկան եւ ապագան», միջազգային գիտաժողովի նիւթերի ժողովածոյ, Երեւան, 2007, էջ 278-281):

գլուխ, Աւետարանոց կամ Զանախչի եւ այլն),

Մարտունու շրջան – 12 բնակավայր եւ յուշարձան (Բռի եղցի, Ամարասի վանք, Ճարտար, Գիշի, Ս. Եղիշայ կոյսի վանք եւ այլն),

Հադրութի շրջան – 14 բնակավայր եւ յուշարձան (Գտչավանք, Տող, Տումի, Ցոր, Սպիտակ Խաչ վանք եւ այլն),

Լաչինի շրջան (Քաշաթաղ) – 7 բնակավայր եւ յուշարձան (Միծեռնավանք),

Քեալբաջարի շրջան (Քարվաճառ) – 7 բնակավայր եւ յուշարձան (Դադիվանք, Ծար-Զառ գիւղ, Զափնի, Գանձակ եւ այլն),

Խանլարի շրջան (Շահումեան) – 14 բնակավայր եւ յուշարձան,

Քարհատի-Դաշքեասանի շրջան (պատմական Արցախ նահանգի Կողթ գաւառում) - 4 բնակավայր եւ յուշարձան (Թարգմանչաց անապատ, Մլզնաբերդ),

Գետաբակի շրջան (ներկայիս Ադրբեջանի կազմում) – 6 բնակավայր եւ յուշարձան (Զարեքայ անապատ, Փառիսոս եւ այլն):

Կազմողը իւրաքանչիւր բնակավայրին, իբրեւ նախաբան, կցել է համառօտ պատմական ակնարկ, որտեղ նշել է նաեւ տուեալ բնակավայրի կամ յուշարձանի վիմագրութեան քանակական պատկերը, այնուհետեւ, ըստ կարգային համարների, ներկայացուում են վիմագրերի վերծանութիւնները՝ կից գրչապատկերներով, վերջում՝ լուսանկարներով:

Անցնելով առաջ՝ հարկ է նշել, որ 1980-ականներին հրատարակուեց նաեւ պատմաբան Ճահէն Մկրտչեանի՝ Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձաններին նուիրուած մենագրութիւնը (1989-ին՝ նաեւ ռուսերէն լեզուով), որի կարեւորագոյն արժանիքներից մեկն այն էր, որ հեղինակը, յուշարձանների պատմական նկարագիրը շարադրելիս, առանցքային է համարել նրանց աղբիւրագիտական, մասնաւորապէս՝ վիմագրական հենքը: Բազմաթիւ վիմագրերի ամբողջական եւ մասնակի վկայակոչման միջոցով նա նորովի է ներկայացրել Արցախի պատմաճարտարապետական յուշարձանների ընդհանուր պատկերը[33]:

Արցախի պատմութեան ուսումնասիրութիւնը նոր թափ ստացաւ 1980-90-ականներից ի վեր (տե՛ս նկ. 1-8): Ազատագրուած Արցախի եւ յարակից շրջանների նկատմամբ յետխորհրդային Ադրբեջանի նկրտումները ինչ-որ տեղ խթան հանդիսացան տարածաշրջանում պարբերաբար իրականացուող հնագիտական հետազօտութիւնների համար, քանի որ խնդրի լուծման գործում մեծապէս կարեւորուում էին նաեւ պատմամշակութային բնոյթի փաստերը: Մէկը միւսին յաջորդելով ասպարէզ եկան Սամուէլ Կարապետեանի[34], Արտակ Ղուլեանի[35], Ալեքսան Ցակոբեանի[36] եւ ուրիշների մենագրութիւնները, գիտական յօդուածներն ու հրապարակումները: Աւելին, հնագէտ Համլէտ Պետրոսեանի ղեկավարութեամբ 2005 թ. սկսեցին նաեւ Տիգրանակերտի հնագիտական պեղումնե-

---

33 Ճ. Մկրտչեան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները, Երեւան, 1985:

34 Ս. Կարապետեան, *Բուն Աղուանքի հայերէն վիմագրերը*, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրութիւններ, գիրք Ա., Երեւան, 1997. Նոյնի՝ *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրութիւններ, գիրք Գ., Երեւան, 1999. Նոյնի՝ *Հիւսիսային Արցախ*, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրութիւններ, գիրք Զ., Երեւան, 2004:

35 Ա. Ղուլեան, *Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները*, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրութիւններ, գիրք Դ., Երեւան, 2001:

36 Ալ. Ցակոբեան, *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ, Ուտիք)*, Վիեննա-Երեւան, 2009. Նոյնի՝ *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ. դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն)*, Երեւան, 2020:

ը (շարունակուեցին մինչեւ 2020 թ.), որոնց արդիւնքում յայտնաբերուել են նաեւ նոր վիմագրեր[37]*: Վերջին տարիներին ուսումնասիրուած միջնադարեան յուշարձաններից յատկանշելի են Տողի մելիք Եգանի ապարանքը*[38]*, Հանդաբերդի վանքը*[39]*, Վաճառի Ս. Ստեփանոս եկեղեցին*[40]*, Ամարասի վանքը*[41]*, Հոռեկավանքը*[42]*, Վաղուհասի Ս. Տիրամայր վանքը*[43] *եւ այլ հոգեւոր-մշակութային կենտրոններ, որոնց պեղման եւ մաքրման աշխատանքների շնորհիւ շարունակ աւելացել է նաեւ նորայայտ վիմագրերի թիւը: Չնայած նրան, որ, իբրեւ կանոն, պեղումների արդիւնքները նախ զեկուցումների տեսքով ներկայացւում են տարբեր նիստերի եւ գիտաժողովների ընթացքում, ապա հրատարակւում յօդուածների ժողովածոներում, այդուհանդերձ, Արցախի վիմագրերի նոր, լրացուցիչ «Դիւան» ունենալու պահը հասունացել է:*

Իբրեւ օրինակ, յիշատակենք Վաղուհասի Ս. Տիրամայր վանքի պեղումներով՝ հնագէտ Տիգրան Ալեքսանեանի *յայտնաբերած շուրջ 10 վիմագրերը, որոնց վերծանումը հնագէտը վստահեց մեզ: Նախ պարզուեց, որ վիմագրերից 6-ն անտիպ էին, իսկ միւսները հրատարակուած էին բազմաթիւ տարընթերցումներով: Բոլորն էլ թուագրւում են ԺԲ.-ԺԳ. դդ.: Անտիպ վիմագրերից մեկը յայտնում է Խաչենի մեծ իշխան Հասան-Ջալալ-Դոլայի (մահ. 1261 թ.) եւ Մամքանի որդի Աթաբակ-Իւանէի անունը (մահ. 1287 թ.). վերջինս բնութագրուած է «Աստծով թագաւորաշնորհ եւ բարեպաշտ», «Խաչենի տէր եւ ինքնակալ» տիտղոսներով, այսպէս. «Աստուծով թագաւորաշնորհ եւ զբարեպաշտ զԱթաբակն՝ որդի Ջալալ-Դաւլին եւ Մամքանի, տեառն Խաչինոյ եւ ինքնակալ սուրբ ուխտիս, յաղաւթս յիշեցէք»*[44] *(նկ. 8):*

Միւս երկու վիմագրերում կարդում ենք վանքի առաջնորդներ տէր Վանակոբի եւ տէր Յովհաննէսի անունները, որոնց առաջնորդութեան տարիներին տարբեր

---

37 **H. Petrosyan, L. Kirakosyan, V. Safaryan, A. Zhamkochyan, R. Vardanyan, I. Karapetyan, T. Vardanesova,** *The Discovery and First Results of Archaeological Investigation of Tigranakert in Artsakh, 2005-2009,* "Archaeology of Armenia in Regional Context" (Edited by **P. Avetisyan, A. Bobokhyan**), Yerevan, 2012, էջ 227: Ներկայումս արշաւախումբը հրատարակութեան է պատրաստում պեղումների ողջ ընթացքը ներկայացնող ուսումնասիրութիւնը:

38 **Ա. Ժամկոչեան, Ֆ. Բաբայեան,** *Տողի մելիք Եգանի ապարանքի պեղումների հիմնական արդիւնքները,* «Հնագիտական ուսումնասիրութիւններն Արցախում, 2011-2012 թթ.», Ստեփանակերտ, 2015, էջ 152-177:

39 **Հ. Պետրոսեան, Լ. Կիրակոսեան, Վ. Սաֆարեան,** *Հանդաբերդի վանքը եւ նրա պեղումները,* Երեւան, 2009:

40 **Հ. Պետրոսեան,** *Վաճառի Ս. Ստեփանոս վանքի պեղումները եւ համաքրիստոնէական սրբերի ու մասունքների արդիականացման խնդիրները ԺԳ. դարում,*- «Հայաստանը եւ արեւելաքրիստոնէական քաղաքակրթութիւնը, Բ.» միջազգային գիտաժողով՝ նուիրուած ականաւոր հայագէտ-բիւզանդագէտ Կարէն Իւզբաշեանի ծննդեան 90-ամեակին. զեկուցումներ եւ զեկուցումների դրոյթներ, Երեւան, 2017, էջ 231-237. Նոյնի՝ **Հ. Պետրոսեան,** *Վաճառի Ս. Ստեփանոս վանքի հնագիտական հետազօտութեան հիմնական արդիւնքները եւ նորայայտ արձանագրութիւնները,*- «Սեդրակ Բարխուդարեան - 120. Գիտական յօդուածների ժողովածոյ», (խմբ.՝ **Գ. Սարգսեան, Ա. Յարութիւնեան**), Երեւան, 2019, էջ 11-30:

41 **Հ. Պետրոսեան,** *Արցախի արեւելեան մուտքով վաղքրիստոնեական մատուռ-դամբարանները որպէս Վաչագան Բարեպաշտի կրօնական ռեֆորմի դրսեւորում,* «Հայաստանը եւ Քրիստոնեայ Կովկասը», հանրապետական գիտաժողով՝ նուիրուած կովկասեան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնեութեան ընդունման 1700-ամեակին. զեկուցումներ եւ զեկուցումների դրոյթներ, Երեւան, 2015, էջ 160-163:

42 **Գ. Սարգսեան, Ս. Այվազեան,** *Հոռեկավանքի պեղման-մաքրման աշխատանքները,*- «Հնագիտական ուսումնասիրութիւններն Արցախում, 2011-2012 թթ.», Ստեփանակերտ, 2015, էջ 138-146:

43 **Ա. Յարութիւնեան, Տ. Ալեքսանեան,** *Վաղուհասի Ս. Տիրամայր վանքի վիմագրերը,*- «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2017, էջ 399-426:

44 Նոյն տեղում, էջ 412, արձ. 6:

ուխտաւորներ անդամագրուել են վանքին ու դրա դիմաց պատարագներ ստացել, մասնաւորապես՝ ոմն Մխիթար, միաբանել է Ս. Գրիգոր եկեղեցուն եւ երկու ժամ-պատարագ ստացել Հոգեգալստեան տօնին, քանի դեռ կենդանի է՝ ծնողների, իսկ մահից յետոյ՝ իր եւ կնոջ յիշատակին[45]*: Վանքին միաբանելու եւ պատարագի արժանանալու երեւոյթն ինքնին ուշագրաւ է: Թերեւս այն աշխարհիկ միաբանների կամ պարոնտէրութեան ինստիտուտների գոյութեան միջնադարեան դրսեւորումներից է*[46]*:*

Վաղուհասի վիմագրերից ուշագրաւ է եւս մեկը, որը Ս. Բարխուդարեանը չի տեսել եւ ներկայացրել է ըստ նախորդ հրատարակիչների[47]*: Վիմագրի համաձայն՝ տէր Գրիգորի առաջնորդութեան օրօք Սիմէոնն ու եղբայրները վանքում փոնախուց ու գրատուն են կառուցել, որոնց դիմաց երկու ժամ-պատարագ են ստացել, մէկը՝ Սերոբին, միւսը՝ Սեւադին. «Յառաջնորդութիւն տէր Գրիգորո, ես՝ Սիմեւոն եւ եղբարք իմ, ետու չինել զփոնախուցս եւ կազմել զգրատունն, եղբարք իմ ետուն Բ. (2) աւր պատարագ ի տարեջն, կատարիչքն աւրհնին յԱստուծոյ. Ա. (1) Սերոբա, Ա. (1) Սեւադի»*[48]*: Նման վիմագրերի առկայութիւնը յուշում է, որ այս վանքը ժամանակին եպիսկոպոսանիստ ու նշանաւոր գիտակրթական կենտրոն է եղել, իր ուրոյն տեղն ունեցել Խաչենի առաջնակարգ հոգեւոր համալիրների կազմում:*

Վաղուհասի վիմագրերի միջոցով արդէն իսկ կարելի է որոշակի պատկերացում կազմել միջնադարեան Արցախի հոգեւորմշակութային կենտրոններում եղած արձանագրման աւանդոյթի մասին, այն է՝ տարաբնոյթ շինարարական, նորոգչական աշխատանքներից բացի, արձանագրուել են նաեւ այցելու-նուիրատուների՝ այսպէս կոչուած նուիրաբերման «պայմանագրերը»: Արցախի վիմագրութիւնը եւս մեր միջնադարեան աւանդոյթների լիիրաւ կրողն է: Ակներեւ է, որ այստեղ գործել են ոչ միայն հմուտ քանդակագործներ, այլեւ շնորհաշատ գրիչներ, որոնց վստահուել են նշանաւոր Հասան-Ջալալեան իշխանական տան ներկայացուցիչների ընդարձակ, երբեմն էլ համառօտ ու վայելչագիր արձանագրութիւնների փորագրումը յատկապէս Գանձասարում ու Դադիվանքում:

Նշելի է մի կարեւոր հանգամանք եւս. Արցախի վիմագրութեան մի ստուար մասն էլ ԺԹ.-Ի. դդ. տապանագրերն են, որոնք զգալի չափով դուրս են մնացել տեղագիրների աշխատութիւններից եւ Ս. Բարխուդարեանի կազմած «Դիւան»-ից՝ համարուելով հնագիտական արժէքից զուրկ: Ուրախալի է, որ մեր օրերում եւս գտնւում են անհատ հետազօտողներ, որոնք յատուկ ուշադրութիւն են դարձնում մեր տապանաքարային արուեստին ու դրանց արձանագրութիւններին: Այս գործում յատկանշական է նախկին զինուորական Հրաչիկ Յարութիւնեանի՝ *Շուշիի ԺԸ.-ԺԹ. դդ. տապանագրերին նուիրուած աշխատութիւնը: Վիմագրական մեծածաւալ նիւթի հիմամբ հեղինակը, ի դէմս Շուշիի քարեղէն գրաւոր լայնօրէն տարածուած* տոհմանունների ու ազգանունները, արհեստների ու կենցաղը[49]:

Արցախի վիմագրութեան ուսումնասիրութեան շուրջ կարելի է երկար խօսել, սակայն ասուածն էլ բաւական է ընդհանուր պատկերացում կազմելու համար այստեղ արուած եւ անելիք աշխատանք-

---

45 Նոյն տեղում, էջ 415, արձ. 7:

46 **Հ. Յակոբեան,** *«Աշխարհիկ միաբանների» ինստիտուտը միջնադարեան Հայաստանում,- ԲԵՀ. Հայագիտութիւն, 2014, Հմ 2 (143), էջ 27:*

47 ԴՀՎ, պրակ V, *Արցախ*, էջ 114, արձ. 378:

48 **Ա. Յարութիւնեան, Տ. Ալեքսանեան,** նշ. աշխ., էջ 409-410, արձ. 5:

49 **Հ. Յարութիւնեան,** Շուշի. քարեղէն անխօս վկաներ, Ստեփանակերտ, 2013:

ների մասին[50]*: Վերջին տարիների ուսումնասիրութիւններով ամբարուել է մեծաքանակ վիմագրական նիւթ, որն ի մի բերելու եւ կեանքի կոչելու համար առաջարկում ենք հետեւեալը. ստեղծել մասնագիտական խումբ, որը կ'ուսումնասիրի առկայ նիւթը եւ հնարաւոր դաշտային-հաւաքչական աշխատանքների միջոցով կը համալրի այն նորերով:*

Այնուհետեւ, ողջ վիմագրական նիւթը հարկ է յարմարեցնել «դիւանակազմութեան» սկզբունքներին ու հրատարակել իբրեւ «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի Արցախի լրացուցիչ պրակ: Նորահրատ ժողովածոն անպայմանօրէն պէտք է ամփոփի նաեւ ԺԹ. դարի ամբողջ եւ Ի. դարի առնուազն ուշագրաւ վիմագրերը՝ իբրեւ Արցախի նոր եւ նորագոյն շրջանի պատմութեան արժանահաւատ վաւերագրերը:

50 Վերջերս, Արցախի միջնադարեան յուշարձանների ուսումնասիրման պատմութեանն անդրադարձել է հնագէտ Տիգրան Ալեքսանեանը (**Տ. Ալեքսանեան,** Միջնադարեան յուշարձանների ուսումնասիրութիւնը Խաչենի իշխանութեան տարածքում (նախախորհրդային շրջան), «Էջմիածին», 2017, Թ., էջ 32-46. Նոյնի՝ Միջնադարեան յուշարձանների ուսումնասիրութիւնը Խաչենի իշխանութեան տարածքում (խորհրդային եւ յետխորհրդային շրջան), «Էջմիածին», 2018, Գ., էջ 118-138: Բազմաթիւ ուսումնասիրութիւններ են արուել նաեւ հնագիտութեան, ճարտարապետութեան եւ արուեստի այլ բնագաւառներում (**Մ. Հասրաթեան, Հ. Սիմոնեան, Գ. Սարգսեան** եւ այլք):

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Նկ. 1. Սամուէլ Կարապետեանը՝ Խանլարի շրջանի Գետաշէն գիւղի Մրցունիս գիւղատեղի եկեղեցու վիմագիրն ընդօրինակելիս (լանկ.՝ Յ. Բաղալեանի, 1980-ական թթ.

Նկ. 2. Հնագէտ Համլէտ Պետրոսեանը՝ Վանքասարի եկեղեցու վիմագիրն ընդօրինակելիս (լանկ.՝ Հ. Պետրոսեանի, 2009 թ.)

Նկ. 3. Տիգրանակերտի պեղումներով յայտնաբերուած կաւէ սկաւառակը՝ Վաչագան Բարեպաշտ թագաւորի անուան յիշատակմամբ, Ե-Զ. դդ. (լանկ. Հ. Պետրոսեանի, 2012 թ.)



Նկ. 4. Վաճառի Ս. Ստեփանոս վանքի գաւթում պեղումներով ի յայտ եկած տապանաքարերը. ԺԳ. դար (լանկ.՝ Հ. Պետրոսեանի, 2017 թ.)

Նկ. 5. Հայագէտներ Քլօդ-Արմէն Մուրաֆեանը եւ Ալեքսան Յակոբեանը Մայրեջրի վանքում (Քաշաթաղ)՝ վիմագիր վերծանելիս (լանկ.՝ Ալ. Յակոբեանի, 2001 թ.)

Նկ. 6. Ալեքսան Յակոբեանը դարձեալ Մայրեջրի վանքում (Քաշաթաղ)՝ տապանագիր վերծանելիս (լանկ.՝ Ալ. Յակոբեանի, 2015 թ.)

Նկ. 7. Վաղուհասի Ս. Տիրամայր վանքի գաւթի արեւելեան մատուռները պեղումների ընթացքում (լուսանկ.՝ Տ. Ալեքսանեանի, 2015 թ.)

Նկ. 8. Վաղուհասի Ս. Տիրամայր վանքի պեղումներով ի յայտ եկած վիմագրերից, ԺԳ. դար (լուսանկ.՝ Տ. Ալեքսանեանի, 2015 թ.)